

«ՀՅՈՒՅՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ»

Միջազգային գիտաժողով Խտալիայի Տրիեստ քաղաքում*

Փետրվարի 10-11-ին Խտալիայի Տրիեստ քաղաքում կայացած «Հայաստանի օրերի» շրջանակներում ՀՀ Սփյուռքի նախարարության և «Արտաքսված ու Վտարանդի անձանց եվրոպական միության» կողմից կազմակերպվել էր «Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ» խորագիրը կրող համատեղ միջազգային գիտաժողովը:

Տրիեստի Առևտրարդյունաբերական պալատի դահլիճում կազմակերպված այդ միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանտ Հակոբյանը: Նա մասնավորապես նշեց, որ Խտալիայի խորհրդարանում շրջանառվող «Ապրիլի 24-ը որպես Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակի օր հոչակելու մասին» օրինագծի ընդունումը կնպաստի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին և հակահարված կլինի Թուրքիայի Ժխողականությանը:

Այնուհետև Հայաստանում Խտալիայի դեսպան Բրոնի Սկապինին ընթերցեց Խտալիայի Սենատի նախագահի և արտաքին գործերի նախարարի համատեղ ուղերձը միջազգային գիտաժողովի մասնակիցներին:

Ողջոյնի խոսքով հանդես եկավ նաև Խտալիայում ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանը, որը կարևորեց Խտալիայում Հայոց ցեղասպանության վերաբերյալ միջազգային գիտաժողով անցկացնելու հանգանանքը:

Գիտաժողովի համակազմակերպիչ՝ «Արտաքսված ու Վտարանդի անձանց եվրոպական միության» գլխավոր քարտուղար Մասիմիլիան Լակոտան, ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, հույս հայտնեց, որ հետագայում էլ կշարունակվի համագործակցությունը մասնագետների միջև՝ Հայոց ցեղասպանության և մարդկության դեմ իրականացված այլ հանցագործությունների հետազոտման ուղղությամբ:

Խտալական կողմից գիտաժողովում գեկուցումներով հանդես եկան լրագրող Էմանուել Ալիպրանդին և Սիենայի համալսարանի պրոֆեսոր Մարչելլո Ֆլորեսը, որոնք իրենց ելույթներում միանշանակորեն դատապարտեցին 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության տարածքում իրականացված Հայոց ցեղասպա-

ԴՐԱ ԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ ՎԵՐԱԿՐՈՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՎԵՐԱԿՐՈՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

*Ընդունվել է տպագրության 20.05.2012:

նուրյունը՝ ընդգծելով, որ միջազգային հանրությունը պետք է հետևողական լինի ցեղասպանությունների դատապարտման ու կանխարգելման գործում:

Գյուտաժողին մասնակցում էր նաև ԱՄՆ-ում բնակվող թուրք հայտնի պատմաբան **Թաներ Աքչամը**, որի գեկուցման հիմնադրույթները հարկ ենք համարում ներկայացնել ավելի հանգամանորեն: Նա ներկայացրեց այն հիմնախմնդիրները, որոնք, իր կարծիքով, խոշնդրություն են Հայոց ցեղասպանության պատմության հետագա հետազոտմանը: Բանախոսը կանգ առավ հատկապես հայկական աղբյուրները տարբեր լեզուներով ու մասնավորապես թուրքերենով բարգմանված չինելու իրողության վրա: Նրա կարծիքով՝ նման թերության շտկումը կնպաստի, որ դրանք հասանելի դառնան թուրք մասնագետներին ու հասարակությանը: Թուրք պատմաբանը կարծիք հայտնեց նաև, որ վերջին շրջանում անգամ Թուրքիայի հետազոտողների մտածողության մեջ են որոշակի փոփոխություններ կատարվել: Ակչամը մեծ նվաճում համարեց նաև այն իրողությունը, որ թուրք հետազոտողները ներկայում իր՝ այլս միանշանակորեն չեն մխսում Հայոց ցեղասպանությունը, այլ առաջնորդվում են՝ «Դուք մնացեք Ձեր կարծիքին, ես՝ իմ» սկզբունքով: Դրանից զատ, բանախոսը հարկ համարեց նշել, որ հայ հետազոտողներն իրենց ուսումնասիրություններում դեռևս չեն կարողանում ձերքազատվել զգացմունքայնությունից, ուստի անցյալից եկող՝ թուրքերի հանդեպ թշնամական զգացմունքները շարունակում են տեղ գտնել հայ հեղինակների գործերում: Թուրք պատմաբանի կարծիքով՝ դրանից տուժում է այդ աշխատությունների գիտականությունը:

Թաներ Ակչամը Հայոց ցեղասպանության հետագա հետազոտման համար լուրջ խոշնդրության մեջ նաև այս բնագավառի հետազոտողների սերնդափոխության հիմնախմնդիրի լուծման գործում նկատվող դժվարությունները: Արձանագրելով, որ բացի իրենից, Վ. Դադրյանից և Ռ. Հովհաննիսյանից, ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության պատմության հետազոտողներ չկան, նա ընդգծեց Հյուսիսային Ամերիկայում գործող հայագիտական կենտրոնների ոչ բավարար ֆինանսավորման հանգամանքը, ինչը բույլ չի տալիս հետազոտողներին զբաղվել համապատասխան թեմաների ուսումնասիրությամբ:

Թուրք պատմաբանն անդրադարձավ նաև Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործընթացում, իր կարծիքով, առկա մերժուարանական սխալներին: Պնդելով, որ հրապարակվող հետազոտությունների մեջ մինչ օրս անտեսվում կամ շրջանցվում է Հայոց ցեղասպանության իրագործման մտադրության և հատկապես շարժանիքների հարցը, Թաներ Ակչամը գտնում է, որ ի վերջո՞ հարկավոր է հստակեցնել, թե ինչի՞ հետևանք էր Հայոց ցեղասպանությունը: Որպես օրինակ նա մատնանշում է Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը, կրոնական անհանդուժողականությունը և այլն:

Սրանով բանախոսը փաստորեն անուղղակիրեն վերաշարադրեց իր «Թուրք ազգային ինքնությունը և հայկական հարցը» աշխատության մեջ տեղ գտած՝ երիտրուրքերի վարչակարգի այսպես կոչված «ռացիոնալ» քաղաքականության մասին դրույթը, որով նա ժամանակին փորձել է «քացարել» հայերի զանգվածային ոչնչացման գործընթացը: Հարկ ենք համարում առանձնահատուկ նշել, որ ընդունելով հանդերձ Հայոց ցեղասպանության փաստը, թուրք պատմաբանն իր ելույթում Արևմտյան Հայաստանի փոխարեն շարունակում էր օգտագործել թուրքական «Արևելյան Անստողիա» եգրույթը:

Զերծ մնալով Թաներ Ակչամի առաջադրած հիմնադրույթների հանգամանա-

լից քննարկումից, բավարարվենք նրանով, որ իր գեկուցման մեջ մատնանշելով Հայոց ցեղասպանության հետազոտման գործում առկա բարդ հիմնախնդիրներն ու օրյեկտիվ դժվարությունները, թուրք պատմաբանը դրանք չափազանցնելով՝ ջանում էր ներկայացնել իրու լուրջ, անհաղահարելի խոչընդոտներ, որոնց հիման վրա էլ հանգում էր հոռետեսական եղրահանգումների: Թ: Աքշամի ելույթում, անշուշտ, կային ռացիոնալ շեշտադրումներ, սակայն, ընդհանուր առմամբ, նրա վիճելի հարցադրումները հակասական տպավորություններ ասելողնեցին գիտաժողովի օստարազգի մասնակիցների շրջանում: Ուստի՝ կարծում ենք, որ այսուհետև Հայոց ցեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողովներին թուրք մասնագետներին հրավիրելու դեպքում չէր խանգարի նախապես նրանցից պահանջել գեկուցումների հիմնադրությները, որպեսզի բացառվի նմանատիպ անակնկալների մատուցումը:

Գիտաժողովին իր մասնակցությունը բերեց նաև Լիբանանի «Մարդու իրավունքներ և մարդասիրական իրավունքներ» հիմնադրամի տնօրեն Վաել Նիկոլաս Հայերը, որը Հայոց ցեղասպանության հանցագործությունը դիտարկեց իրու մարդու իրավունքներից ամենակարևորներից ու հիմնարարներից՝ կյանքի իրավունքի կոպիտ խախտում, մատնանշելով նման հանցագործությունների դատապարտման ու դրանց համար պատժի անհրաժեշտությունը:

Չափազանց կարևոր պետք է համարել ֆրանսահայ իրավաբան, Ֆրանսիայի խորհրդարանի երկու պալատների կողմից ընդունված ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագծի հեղինակ Ֆիլիպ Կրիկորյանի մասնակցությունը գիտաժողովին: Իր գեկույցում նա հանգամանորեն անդրադարձավ Ֆրանսիայում ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագծի նախապատրաստմանը, քննարկմանն ու Ազգային ժողովի և Սենատի կողմից ընդունմանը: Քանի որ Ֆիլիպ Կրիկորյանը ելույթ էր ունենում Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի հայտնի որոշումից առաջ՝ 2012 թ. փետրվարի 11-ին, նա, վերլուծելով օրենքի հետ կապված զարգացումները, մասնավորապես՝ Ֆրանսիայի նախագահի «չեզոր» դիրքորոշումը և Սահմանադրական խորհրդի կանխակալ վերաբերմունքը, հանգեց այն եզրակացությանը, որ ստեղծված պայմաններում, ամենայն հավանականությամբ, օրենքը Սահմանադրական խորհրդի կողմից կճանաչվի հակասահմանադրական, ինչն էլ տեղի ունեցավ օրեր անց:

Հայաստանից գիտաժողովին մասնակցում էին ՀՀ Սահմանադրական դատարանի միջազգային պայմանագրերի բաժնի վարիչ Վաղիմիք Վարդանյանը և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ Արմեն Մարտիրյանը:

Վ.Վարդանյանն իր գեկույցում ներկայացրեց այն միջազգային իրավական հիմնախնդիրները, որոնք առկա են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման ճանապարհին՝ մատնանշելով նաև դրանց հաղթարման ուղիներն ու հնարավորությունները:

Մենք մեր գեկույցում հիմնվում էինք այն կանխադրույթի վիա, որ ներկա հանգրվանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացին զուգահեռ՝ Հայաստանն ու հայությունը պետք է հանդես գան Հայոց ցեղասպանության հետևանքների հայրահարման պահանջով: Այս առումով փորձեցինք հիմնավորել Հայաստանի ու Սփյուռի համապատասխան կառույցների ու մասնագետների համատեղ ուժերով «Հայոց ցեղասպանության

հետևանքների հաղթահարման հայեցակարգի» ստեղծման անհրաժեշտությունը¹:

Պետք է նշել, որ թե՝ «Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ» միջազգային գիտաժողովը և թե՝ դրան նախորդած միջոցառումները մեծ արձագանք գտան Տրիեստի հասարակայնության շրջանում: Գիտաժողովի հաջորդ օրը Տրիեստի մի շարք բերթերում տպագրվեցին հոդվածներ, որոնցում հանգամանալից լուսաբանվում և բարձր գնահատականի էին արժանանում և՝ գիտաժողովը, և «Հայաստանի օրերն» ընդհանրապես:

Ա.Ա.

“AHEAD OF THE 100TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE”

International Conference in the Italian city of Trieste

A.M

1 Ավելի մանրամասն տես «Վեն»-ի ներկա համարում հրապարակվող Արմեն Ց. Մարուբյանի «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը. իրավաբաղարական հիմնավորումների ուրվագիծ» ոսումնասիրությունը: Խմբ.: